

ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՅ ՆԱԽԱՐԱՐ ԱՂՏՈՒԼԱԶԵԱՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ՊԱՏՈՒՐԱՎՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 4 Յուլիս 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Իրանի արտաքին գործոց նախարար Զուսէյն Էմիր Ապտուլլահեանը եւ անոր ընկերակցող պատուիրակուիները:



Կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներու անխախտ յարաբերութեան եւ տարբեր ոլորտներու մէջ գործակցութեան շուրջ:

Նախարար Ապտուլլահեան յայտնեց, որ Ասատի վերջին այցելութիւնը Թեհրան արդիւնաւետ էր թէ՛ Սուրիոյ եւ թէ Իրանի համար: Ան դիտել տուաւ, որ սուրիական հողերուն վրայ իսրայէլեան յարձակումները Սուրիոյ դէմ մղուած համաշխարհային ահաբեկչական պատերազմին պարունակին մէջ պետք է դիտել որովհետեւ անոց նպատակն է Սուրիոյ խաղաղութիւնը խախտել եւ տարածքային ամբողջականութիւնը քայքայել:

Իր կարգին Նախագահ Ասատ յայտնեց, որ թրքական ուժեր սուրիական տարածքներու վրայ կը յարձակին սուրիական բանակին կողմէ իւրաքանչիւր ձեռքբերուած յաղթանակէ ետք, շեշտելով, որ անոնք կը խախտեն միջազգային օրէնքները եւ բոլոր համաձայնութիւնները:

Կողմերը խորհրդակցեցան նաեւ միջազգային եւ տարածաշրջանային գետնի վրայ արձանագրուած վերջին զարգացումներուն շուրջ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ ԻՐ ՎԱՐԱԾ ՄՆՃԵԱԼ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

Ուրբաթ, 1 Յուլիս 2022-ին տեղի ունեցած Հայաստանի Ազգային Ժողովի նիստին ընթացքին, փակ-գաղտնի քուէարկութեամբ, Ազգային Ժողովը Իշխան Սաղաթէլեանը հեռացուց իր փոխնախագահի պաշտօնէն եւ դադարեցուց Վահէ Յակոբեանի լիազօրութիւնները՝ Տնտեսական հարցերու մնայուն յանձնախումբի նախագահի պաշտօնէն:



Մինչ Ազգային Ժողովին մէջ կը քննարկուէր ընդդիմադիրները պաշտօնազուրկ ընելու հարցը, «Դիմադրութիւն» շարժումը բողոքի ցոյց կատարեց Ազգային Ժողովի շէնքին դիմաց, ուր հաւաքուած էին մեծ թիւով ոստիկաններ:

107 պատգամաւորներէն քուէարկութիւններուն մասնակցեցան 66-ը, որոնք «Զաղաքացիական Պայմանագիր»-ի անդամներ էին, անվաւեր քուէաթերթիկներ չկային, ձայները բաշխուեցան հետեւեալ կերպով՝ Իշխան Սաղաթէլեանը պաշտօնազուրկելու՝ թեր 66, դէմ 0, Վահէ Յակոբեանը պաշտօնէն արձակելու՝ թեր 66, դէմ 0:

Իշխան Սաղաթէլեան Խորհրդարանի փոխնախագահի պաշտօնէն հեռացուելուն լուրը ստանալէ ետք յայտնեց, որ «Հայաստան» խմբակցութիւնը ինքնակամ պիտի իրաժարի Ազգային Ժողովին մէջ իր վարած միւս պաշտօններէն եւս՝ աւելցնելով, որ զինք եւ Յակոբեանը պաշտօններէն հեռացնելը քաղաքական հետապնդում է, իսկ այս գծով իշխանականներուն հիմնաւորումները՝ ծիծաղելի:

Նոյն օրուան ընթացքին, աւելի ուշ, «Հայաստան» խմբակցութենէն Տարածաշրջանային եւ Եւրասիական Համարկման Հարցերու Յանձնախումբի նախագահ Արմէն Գեորգեան, Ֆինանսավարկային եւ Պիտոնական Հարցերու Յանձնախումբի փոխնախագահ Արթուր Խաչատրեան, Աշխատանքի եւ ընկերային հարցերու յանձնախումբի փոխնախագահ Թադէոս Աւետիսեանը յայտնեցին իրենց իրաժարականներուն մասին: «Պատիւ Ունեմ»

Շար.՝ Էջ 9

Արամ Ա. ՎԵՀԱՓՈՋ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԶԵՆՈՒՄ Անթիլիասի Մայրավանքին Մէջ Կատարուեցաւ Սրբալոյս Միւռոնի Օրհնութիւն

Անթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ կատարուեցաւ հայ եկեղեցին վերանորոգող եւ մարդ անհատի հոգին մաքրող արարողութիւնը՝ սրբալոյս միւռոնի օրհնութիւնը, որ, աւանդութեան համաձայն, տեղի կ'ունենայ եօթը տարին անգամ մը: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատ-



մութեան անթիլիասական շրջանի տասներորդ միւռոնօրհնութիւնն է, որ կատարուեցաւ: Աշխարհի չորս անկիւններէն հայ եկեղեցւոյ հաւատարիմ զաւակներ եկած էին մասնակից դառնալու եւ դիտելու, թէ ինչպէ՛ս Կիլի-

Շար.՝ Էջ 4

ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱԶՍՈՒՐԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՆՊԱՄՆԵՐՈՒՆ ՇԵՏ

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան հանդիպում ունեցաւ Լիբանանի, Սուրիոյ եւ Իրանի խորհրդարաններու անդամներ Յակոբ Բագրատունիի, Ժորայր Ռէսսեանի եւ Արա Շահվերտեանի հետ:



Խորհրդակցական այս հանդիպումին առանցքը կազմեցին միջինարեւելեան երկիրներուն մէջ տիրող ընդհանուր իրավիճակը եւ շրջանի քաղաքական գործընթացները:

Խորհրդակցութիւնը կը ներառէր հայաստանեան խնդիրները, Արցախի կացութիւնը եւ Սփիւռքի մէջ հայկական գործնի դերակատարութեան առնչուող հարցեր:

ՀՀ ՄԱՐՊԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՋԵՐԾՈՒԾ ՏԱՐԱԾԵՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հալէպի մէջ Հայաստանի Մարդասիրական Առաքելութեան խումբը իր փոքրիկ, բայց կարեւոր լուծման կը ներդնէ մեր հայրենիքի զարգացման եւ զայն միջազգային ասպարեզի մէջ աւելի ճանաչելի դարձնելու աշխատանքներուն մէջ:



Առաքելութեան գործունեութեան առաջին օրէն մինչեւ այսօր «Մարդասիրական Ականազ Երծման եւ Փորձագիտական կեդրոն»-ի ականագերծողները մաքրած եւ սուրիական իշխանութիւններուն յանձնած են ականագերծուած աւելի քան մէկ միլիոն հարիւր տասնվեց հազար քառակուսի մէթր տարածք, յայտնաբերած՝ աւելի քան 900 գի-

Շար.՝ Էջ 8

Խմբագրական

ՍՊԱՌԵՐԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Աշխարհաքաղաքական ներկայ կացության մեջ, երբ Ատրպայեյճանն ու Թուրքիան ամեն ջանք ի գործ կը դնեն ճնշումներ բանեցնելու Հայաստանի վրայ ու Նախապայմաններ դնելով ճամբաներու ապաշրջափակման թեզը պաշտպանելու իրենց շահերէն մեկնելով, Հայաստան բանակցային գետնի վրայ, աշխարհագրական առումով եւ քաղաքական իր մշակոյթով տարբերելու շարք մը յատկութիւններ ունի, որոնց օգտագործման օրակարգը առաջնային կը համարուի եւ ուժերու գերլարում կը պահանջէ:

Բանակցային գետնի վրայ Ատրպայեյճան խախտած է 9 Նոյեմբերի իր ստորագրած համաձայնագիրին շարք մը կետերը, ինչպէս գերիներու ազատ արձակումն ու հայկական տարածքներ չնտրուածելու իր պարտաւորութիւնը:

Այս խախտումը ինքնին հայկական կողմին վրայ պարտք կը դնէ տեր դառնալ իր տարածքներուն եւ Նորանոր գիշումներու որեւէ թեզ ետ մղել դիւանագիտական ճկունութեամբ:

Աշխարհագրական իր դիրքով Հայաստան, ճամբաներու ապաշրջափակման պարագային, ունի տարածաշրջանային երկիրներ իրար միացնելու առաւելութիւն, առանց սակայն միջանցքներ տրամադրելու, ինչ որ առաւելութիւն կը շնորհէ Հայաստանին բանակցային ոլորտին մէջ կայուն դիրքերէ խօսելու եւ յաւելեալ գիշումներ բացառելու: Առանց Հայաստանի համաձայնութեան, վերջապէս, կարելի չէ Հարաւային Կովկասի այդ հատուածին օգտագործումով խաղաղ երթեւեկութիւն հաստատել ու ամրագրել զայն, որքան ալ պարտադրանքի ու սպառնալիքի լեզուով փորձեն խօսիլ Ատրպայեյճանն ու Թուրքիան:

Երրորդ. Հայաստանի քաղաքական մշակոյթը հիմնովին կը տարբերի Թուրքիոյ եւ Ատրպայեյճանի բռնապետական վարչակարգերու քաղաքական մշակոյթներէն: Այս առաւելութիւնը շեշտադրելու փոխարէն գարմանալի են ժողովրդավարութիւնը ոտնահարող Հայաստանի իշխանութիւններու ներկայ քաղաքականութիւնը, ընդդիմութեան ներկայացուցիչները պաշտօնազրկելու եւ քաղաքական մեծամասնութեան կամքը պարտադրելու փորձերը, որոնք կը հակասեն ՀՀ սահմանադրութեան ու ժողովրդավարութեան բոլոր սկզբունքներուն:

Հայաստան ժողովրդավարութեան ու բազմակարծութեան իր մշակոյթով առաւելութիւն արձանագրած է ու հարկ է այդ առաւելութիւնը շեշտադրել, ընդգծելու դրացի երկիրներու բռնապետական կարգերու բացասական ազդեցութիւններն ու հետեւանքները եւ մերձեանալու ժողովրդավարութեան եւրոպական չափանիշներուն:

Ընդդիմութիւնը, վերջապէս, իշխանութեան քաղաքականութեան նշանոցները ուղղելու եւ բանակցային գործընթացին մէջ այլընտրանքներու առիթներ ստեղծելու քաղաքական կամքն է որ կը դրսեւորէ, ոչ թէ իշխանութեան գոյութեան կը սպառնայ, այնպէս ինչպէս կը համարուի յետադիմական երկիրներու մէջ:

Այլ առաւելութիւն մըն է հայկական Սփիւռքին գոյութիւնը, որուն դերը Նստեմացնելու համար Թուրքիոյ իշխանութիւնները ամեն միջոցի կը դիմեն ու կը դիմեն, ցաւօք ազդելով Նաեւ Հայաստանի ներկայ իշխանութեան Սփիւռքի հետ յարաբերութեան վրայ:

Հայ քաղաքական միտքը հարկ է որ ճիշդ ուղղութեան վրայ պահէ Հայաստանի ու հայութեան շահերուն նշանոցը՝ առանց իյնալու իշխանութիւն-ընդդիմութիւն բնական այլակարծութիւնը ժողովրդավարութեան անկումի վերածող ու ընդդիմութեան դէմ պատերազմ սանձազերծող կարճատեսներու ծուղակին մէջ:

Հայաստանը ճակատագրական հարցերու ընդառաջ կանգնած է, լուսարձակը հարկ է բանալ այդ հարցերու լուծման քայլերուն վրայ:

«Գ.»

- Ուրբաթ, 1 Յուլիս 2022-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի ներկայացուցիչ Արթ. Տ. Արշակ Ա. Քիւն. Ալաճաճեան, Ազգ. Վարչութեան անդամ Յարութ Աւրեսեան եւ Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Ծերուն Գահուեճեան իրենց մասնակցութիւնը բերին սուրիացի քիւրտ ցեղախումբերու ազգային համագումարին, ուր մասնակիցները մերժեցին Սուրիան բաժնող դաւադրական ծրագիրները եւ իրենց զօրակցութիւնը յայտնեցին Սուրիոյ բանակին՝ Սուրիոյ ամբողջականութիւնը ապահովելու եւ սուրիական հողը ազատագրելու ահաբեկական խմբաւորումներէն:



-Երեքշաբթի, 5 Յուլիս 2022-ին, «Ուաթան Անլայն» հաղորդեց, որ Թուրքիայէն ժամանած, թրքական ուժերուն ենթակայ զինուորական շարասիւն մը Հասիչէի Արուարձանի Ռաս ուլ-Այն քաղաքը խուժեց:



Աղբիւրը ակեցուց, որ թրքական ուժեր եւ անոնց ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ կը շարունակեն իրենց ոտընձգութիւնները Հասիչէի արուարձանին մէջ, այլազան շրջաններու եւ գիւղերու վրայ իրարայայջորդ յարձակումներ գործելով:

-Երեքշաբթի, 5 Յուլիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ կառավարութիւնը Ատիայի տօնին առիթով Շաբաթ, 9 Յուլիս 2022-էն մինչեւ Հինգշաբթի, 14 Յուլիս 2022 արձակուրդ յայտարարեց կառավարական բոլոր կեդրոններուն համար:



-Երեքշաբթի, 5 Յուլիս 2022-ին, «Շամ Ուիլնկ» օդանաւային ընկերութիւնը յայտարարեց, որ Հալէպի Միջազգային Օդակայանէն ուղիղ թռիչքներ պիտի սկսին դէպի Ապու Տապիի Միջազգային Օդակայան: Հալէպ-Ապու Տապի թռիչքները սկզբնական շրջանին տեղի պիտի ունենան շաբաթական դրութեամբ, ամեն Ուրբաթ:



Ընկերութիւնը ակեցուց, որ Հալէպի Միջազգային Օդակայանէն ուղիղ թռիչքներ սկսիլը մեծ կարեւորութիւն ունի Հալէպի նման պատմական եւ տնտեսական քաղաքի մը համար, ինչպէս նաեւ ճամբորդներուն համար, որովհետեւ անոնց ճամբորդութեան դժուարութիւնները կը նուազեցնէ: Այսպիսով Հալէպ օդային ուղիղ թռիչքներու կարելիութիւն կը ստեղծէ կարեւոր ուղղութիւններով, ինչպէս՝ Շարիքայի, Քուէյթի, Երեւանի, Պէյրութի եւ Ապու Տապիի:

-Երկուշաբթի, 4 Յուլիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշշարալ-Ասատ հրապարակեց 2022-ի «29» թուակիր օրէնքը, որուն համաձայն համալսարանականներու հանրակացարաններու վարչութեանց նիւթական եւ վարչական լիազօրութիւններ պիտի տրամադրուին՝ ուսանողներուն մաքուր, ապահով եւ հանգստաւետ բնակութիւն ապահովելու, ինչպէս նաեւ հանրակացարաններու նորոգութեան եւ անոնց ենթակայ նոր բաժիններ հիմնելու նպատակով:



ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵՂԵԱՆ ՍԹՐԱԶՊՈՒԿԻ ՄԵՋ ԸՆԹՔ ՄԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՃԱԼ

Աշխատանքային այցելութեամբ Սթրազպուրկի մէջ գտնուող ՀՀ Գ Կայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթեղեան շարք մը հանդիպումներ ունեցաւ Եւրոպական Խորհրդարանին մէջ:

Հանդիպումներ տեղի ունեցան Եւրոպական Խորհրդարանի պատգամաւորներու, ՀՀ-ԵՄ խորհրդարանական գործակցութեան յանձնաժողովի անդամ Փեթեր Վիտանովի, Եւրոպական Խորհրդարանի Հայաստանի հետ բարեկամութեան խումբի նախագահ Լուքսա Ֆուրլասի եւ Խորհրդարանի ECR քաղաքական խումբի փոխնախագահ Զարլի Վայմերի հետ:



Աշխատանքային օրուան աւարտին Իշխան Սաղաթեղեան հանդիպում ունեցաւ նաեւ Եւրոպական Խորհրդարանի փոխնախագահ Հեյտի Հաուսթայի հետ:

Հանդիպումներուն ընթացքին առանձնապատու կ'ընկերակցէին նաեւ Հայաստանի ու Արցախի շուրջ առկայ ապահովական մարտահրաւերները եւ ատրպէյճանական շարունակական յարձակումը: Իշխան Սաղաթեղեան կարեւոր համարեց Արցախի ինքնորոշման իրաւունքի լիարժէք իրացման եւ կարգավիճակի հարցը, որպէս Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան եւ հակամարտութեան կարգաւորման միջոց: Ընդհանուր առմամբ, որ հայ ժողովուրդի համար անընդունելի է որեւէ լուծում, որով Արցախը պիտի ըլլայ Ատրպէյճանի կազմին մէջ:

Եւրոպացի գործընկերներուն ներկայացուցեցան նաեւ «Դիմադրութիւն» շարժումին նպատակներն ու յառաջիկայ ծրագիրները, քննարկուեցաւ Հայաստանի ներքաղաքական իրավիճակը:

Իշխան Սաղաթեղեանին այցելութիւնը կ'աւարտի քանի մը օրէն:

«ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ» ԸՄՐԺՈՒՄԻ ԵՐԹԸ` Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

5 Յուլիսին` ՀՀ Սահմանադրութեան օրը, «Դիմադրութիւն» շարժումի մասնակիցները հաւաքուած են Արամ Խաչատրեանի արձանին յարակից տարածքին մէջ, ապա երթ իրականացուցած են դէպի Սահմանադրական Դատարան, նախագահի նստավայր եւ Ազգային ժողով: Երթը կը կրէր «Ի պաշտպանութիւն ՀՀ Սահմանադրութեան» խորագիրը:



Երթի մասնակիցները առջեւ եւ կը տանէին «շղթայուած» Սահմանադրութիւնը: Անոնց ձեռքին կային քաղաքական բանտարկեալներու լուսանկարներ, ինչպէս նաեւ «Ձերբակալութիւններով չէք վախճներ», «Քաղաքական բանտարկեալներու երկիր Հայաստան» գրութիւններով պաստառներ:

«Յաւայիօրէն, Հայաստանի մէջ առկայ իրավիճակին մէջ մենք հեռու ենք այն բաղձալի իրավիճակէն, որ կարենանք ամբողջապէս սոսնել մեր Սահմանադրութեան օրը: Հեռու ենք, որովհետեւ ներկայ իշխանութիւնը իր կառավարման առաջին օրէն սկսեալ հիմքը դրաւ ընտրովի արդարադատութեան, միանձնեայ իշխանութեան, մէկ անձի իրամասնները կատարելու միջոցով պետութիւնը ուղղակիօրէն օրինականութեան սահմաններէն դուրս բերելու գործընթացին: Սահմանադրութիւնը դարձաւ ոչ թէ ուղենիշ այս իշխանութեան գործունէութեան, այլ դարձաւ այն հիմնարկը, որ ոտնահարելով ու խեղաթիւրելով այս իշխանութիւնը կը փորձէ ամրապնդել իր աթոռը», երթի մեկնարկին յայտարարեց ՀՀ անդամ Սեւակ Նազարեան:

«5 Յուլիսին ըստ անստիջութեան մենք գիրար շնորհաւորած ենք Սահմանադրութեան օրուան առիթով, իրաւաբանները առհասարակ միշտ այս օրը նշած են, որովհետեւ իրաւաբանութեան մէջ կայ մէկ հիմնական առանցքային փաստաթուղթ՝ Սահմանադրութիւնը, բայց ցաւօք, մենք այսօր Սահմանադրութեան գերակայութիւն չունենք Սահմանադրական դատարանի մօտ», յայտարարեց «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արամ Վարդեանեան:

Երթի մասնակիցները ՄԴ-ի մօտ ձգեցին «շղթայուած» Սահմանադրութիւնը, ապա շարունակեցին քայլերը դէպի նախագահի նստավայր:

Նախագահականի մօտ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Աննա Գրիգորեան յայտարարեց. «Միջոցի հայրենակիցներ, Սահմանադրութեան համաձայն, ՀՀ նախագահը հետեւած է Սահմանադրութեան պահպանումին, բայց այստեղ լուրջ հարց մը կայ, որովհետեւ այստեղ նստող անձը ոչ թէ ՀՀ նախագահն է, այլ ԸԴ խմբակի կողմէն ընտրուած, կամ աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ Նիկոլի կողմէն նշանակուած խամաճիկը:

«Ան այստեղ գործուողութեամբ է ոչ թէ Սահմանադրութիւնը պահելու, այլ ԸԴ շահերը պահպանելու համար, ան այստեղ եկած է, որպէսզի լռէ, իր հիմնական առաքելութիւնը ամէն բան տեսնելն ու լռելն է», ըսաւ ան:

«Այստեղ նստող մարդը պետք է Սահմանադրութեան ոգին ու տարը պահպանէր, բայց կրկին լռած է, երբ քաղաքական ճգնաժամ կայ, կը հետապնդուի ժողովուրդը, որեւէ մէկը, որ այլախոհ է», ըսաւ պատգամաւորը եւ ցոյց տուաւ քաղաքական բանտարկեալներուն նկարները:

Երթի յաջորդ կէտրոնը Ազգային ժողովն էր:

Յարութեան «Առաւոյտի Համար ՊիՏԻ ԸՆԴՈՒՄՆԵՐ ՊԱՅՔՈՒՅԻ

30 Յունիսին Արայիկ Յարութեանեան Արցախի խորհրդարանին մէջ ներկայացուց 2021-ին կատարած աշխատանքները եւ պատասխանեց պատգամաւորներուն հարցումներուն, որոնք առաւելաբար կը վերաբերէին Աղաւնոյ շրջանի ճակատագիրին եւ նոր ճամբաներու կառուցումով ստեղծուելիք նոր կացութեան:

Ան վստահեցուց, որ Լաչինի շրջանի Աղաւնոյ գիւղին համար պիտի շարունակեն պայքարիլ: Վարչապետ Փաշինեան երեք օր առաջ յայտարարեց, որ Բերձոր-Լաչինը շրջանցող նոր ճամբու շահագործման սկսելէ ետք ԼՂԻՄ-ի սահմանէն դուրս գտնուող գիւղերը՝ Բերձորը, Աղաւնուն ու Սուսը պիտի անցնին Ատրպէյճանին:



«Հայաստանի վարչապետին հետ քննարկման ժամանակ ես ըսի՝ Աղաւնոյի հարցը այսօր չենք քննարկել, մենք կը կատարենք բանակցութիւններ, եւ այդ հարցը ձգեցէք բանակցային այս փուլին, տեսնենք, թէ մեր կարելիութեան սահմաններուն մէջ ինչպիսի՞ հասանական լուծումներ կան», յայտնեց Յարութեանեան:

Արցախի նախագահը բանակցութիւններուն մասին մանրամասնութիւններ չներկայացուց` ուղիղ կը բանակցին, թէ՛ միջնորդներու միջոցով: Յատակ կերպով խօսեցաւ Բերձորի ճակատագիրին մասին` դիտել տալով, որ պարտաւոր են յանձնել Բերձոր քաղաքը, իսկ Աղաւնոյ բնակավայրին առընչութեամբ տակաւին աշխատանք կը տանին, բանակցութիւնները կը շարունակեն: Սուս գիւղին մէջ, ըստ Յարութեանեանի, ներկայիս գրեթէ բնակիչ չկայ:

Պատգամաւոր Մետաքսէ Յակոբեան հարցուց, թէ արդեօք նոր ուղիի կառուցման հարցը քննարկելու ատեն նկատի ունեցան այդ գիւղերու հայաթափման վտանգը: Նախագահ Յարութեանեան ըսաւ, որ այդ հարցը չէ քննարկուած, իսկ հիմնականը Աղաւնոյի պարագան է:

Ըստ Արայիկ Յարութեանեանի, Ռուսիայէն եւ Ատրպէյճանէն նոր մայրուղիի նախագիծի քանի մը առաջարկներ ստացուած են: Անվտանգութեան խորհուրդին մէջ, ուր քաղաքական ուժերէն ալ ներկայացուցիչներ եղած են, քննարկած ու, իր ձեւակերպումով` ամենէն անվտանգ տարբերակը ընտրած են: Ան աւելցուց, որ կան գաղտնիքներ, որոնց մասին չի կրնար խօսիլ եւ յստակացնել, թէ ինչո՞ւ այդ տարբերակը ընտրած են:

44-օրեայ պատերազմէն ետք Լաչինի միջանցքը Հայաստանը Արցախին կապող միակ ճանապարհն է: Լաչինի շրջանի մեծ մասը Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցաւ վերջին պատերազմէն ետք:

Ատրպէյճանի կառուցած ճամբան նկարագրելով` Արայիկ Յարութեանեան ըսաւ, թէ կառուցուող մայրուղին, որ պիտի շրջանցէ Բերձորը, աւելի անվտանգ է ու քանի մը անգամ աւելի որակաւոր, քան գործողը: Ըստ անոր, ապահովական երաշխիքները, որոնց մասին մանրամասնութիւններ չտուաւ, աւելի մեծ են: Ան դիտել տուաւ, որ պետք է քննարկուի այն, որ այդ ճամբէն իրաժարիլը ինչ հետեւանքներ կ'ունենայ: «Խնդրեմ, որոշե՛ք: Հետեւանքներուն մասին ալ միասին պատասխան տանք այս երկրին մէջ ապրողներուն, մօտ հարիւր քսան հազար բնակիչի ճակատագիրի մասին ալ մտածենք»:

Աղաւնոյ գիւղին համար կը պայքարին եւ պիտի պայքարին նաեւ շրջանի բնակիչները: «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին հետ ունեցած գրոյցին ընթացքին անոնք կը պնդեն, որ չեն պատրաստուիր լքելու գիւղը: Այս համայնքին մէջ կ'ապրի շուրջ 200 բնակիչ, մանկապարտեզ ու դպրոց կայ:

ՀԱՄԱ-ՀՄԸՄԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԴԱՏՐԱՍՏՈՒԹԻՆՆԵՐԸ ԱՄԲՈՂՋԱՑԱԾ ԵՆ

Համա-ՀՄԸՄԱԿԱՆ 11-րդ մարզախաղերն երեք շաբաթ առաջ, պատրաստութիւնները արդէն իսկ ամբողջացած են՝ 20-30 Յուլիս 2022-ին Հայաստանի մէջ յիշատակելի մարզախաղեր կատարելու համար յստակացած են մարզա-



խաղերուն մասնակցող 20 պատուիրակութիւնները՝ 19-ը ՀՄԸՄ-ական շրջաններ եւ Թեհրանի ՀՄԸՄ-ը: Կատարուած է նաեւ հաւաքական մարզախաղերու մրցումներուն առջանց փիճակաձգութիւնը եւ ճշդուած են մրցակից խումբերը:

Համա-ՀՄԸՄԱԿԱՆ մարզախաղերը, 41 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով, յայտագիրի վրայ ունին 12 մարզախաղեր. - ֆութպոլ, ֆուսբալ, պասքեթպոլ, վոլեյպոլ, փինկ-փոնկ, թենիս, աթլետ, ճատրակ, լող, կուժ, ծովափի վոլեյպոլ եւ 3x3 պասքեթպոլ: Վերջին երեք մարզախաղերը կը կիրարկուին առաջին անգամ ըլլալով: Նաեւ, առաջին անգամ ըլլալով, յայտագիրի վրայ են յատուկ խնամքի կարօտ պատանիներու եւ երիտասարդներու մարզախաղերը՝ «Հրաշք» անունով:

Յատկանշական է, որ այս մարզախաղերուն առաջին անգամ ըլլալով կը մասնակցին ՀՄԸՄ-ի Արցախի, Թիֆլիսի, Ամմանի, Միւնիխի եւ Սթոքհոլմի շրջանները:

Մարզախաղերուն բացման պաշտօնական հանդիսութիւնը կը կատարուի 22 Յուլիսին՝ «Հայ Մարզիկի Օր»-ը, հրապարակային մեծաշուք հանդիսութեամբ մը, որ ուղղակիօրէն կը սփռուի ընկերային ցանցերով: Ուղղակի կը սփռուին նաեւ մարզախաղերու մասնակիցներուն Ծիծեռնակաբերդ եւ Եռաբլուր այցելութիւնները, աւարտական մրցումները եւ փակման հանդիսաւոր արարողութիւնը:

Մարզախաղերուն մասնակցելու համար Հայաստան կը ժամանեն 600 մարզիկ-մարզիկուհիներ, մարզիչներ եւ մարզական պատասխանատուներ: Անոնց կողքին, յատուկ խնամքի կարօտ 200 պատանիներ եւ երիտասարդներ կը կատարեն «Հրաշք» խաղերը եւ կը մասնակցին պաշտօնական բացման հանդիսութեան:

Ստորեւ՝ հաւաքական մարզախաղերու մասնակից շրջաններուն ընդհանուր պատկերը.-

ՊԱՍԵԹՊՈԼ ԵՐԷՅ ՏՐԱՔ

- Ա. ԽՄԲԱԿ
1. Արեւմտեան ԱՄՆ (1)
 2. Լիբանան
 3. ՀՄԸՄ-ՀԱՍԿ
 4. Արեւելեան ԱՄՆ (2)

- Բ. ԽՄԲԱԿ
1. Արեւելեան ԱՄՆ (1)
 2. Աստրալիա
 3. Սուրիա
 4. Թեհրանի ՀՄԸՄ

ՊԱՍԵԹՊՈԼ ԵՐԷՅ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Աստրալիա (1)
2. Աստրալիա (2)
3. Արեւմտեան ԱՄՆ (1)
4. Լիբանան
5. Սուրիա

ՖՈՒԹՊՈԼ

- Ա. ԽՄԲԱԿ
1. Արեւմտեան ԱՄՆ (1)
 2. Աստրալիա
 3. Թիֆլիս
 4. Հարաւային Ամերիկա

- Բ. ԽՄԲԱԿ
1. Երուսաղէմ
 2. ՀՄԸՄ-Ֆրանս
 3. Սուրիա
 4. Լոնտոն

ՎՈԼԵՅՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Հարաւային Ամերիկա
2. Արցախ
3. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (1)
4. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (2)

ՖՈՒԹՍԱԼ ՏՐԱՔ

- Ա. ԽՄԲԱԿ
1. Լիբանան
 2. Մարսել (2)
 3. Սթոքհոլմ
 4. Սուրիա
 5. Երուսաղէմ

- Բ. ԽՄԲԱԿ
1. Հարաւային Ամերիկա
 2. ՀՄԸՄ-ՀԱՍԿ
 3. Գանատա
 4. Աստրալիա
 5. Մարսել (1)

ՖՈՒԹՍԱԼ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Աստրալիա
2. Հարաւային Ամերիկա
3. Գանատա
4. ՀՄԸՄ-ՀԱՍԿ

ՊԱՍԵԹՊՈԼ 3x3 ՏՐԱՔ

- Ա. ԽՄԲԱԿ
1. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (1)
 2. Լիբանան
 3. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (2)
 4. Լոնտոն

- Բ. ԽՄԲԱԿ
1. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (3)
 2. Գանատա
 3. Սուրիա
 4. ՀՄԸՄ-Ֆրանս

ՊԱՍԵԹՊՈԼ 3x3 ԱՂՋԻԿՆԵՐ

1. Լիբանան (1)
2. Լիբանան (2)
3. Սուրիա



ԾՈՎԱԹԻՎՈՒՆԵՅՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Գանատա
2. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (1)
3. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (2)
4. ՀՄԸՄ-ՀԱՍԿ (3)

Անհատական մարզախաղերու պարագային, շրջաններու մասնակցութեան պատկերը կը պարզէ հետեւեալը.-

Աթլետ.- Պաղտատ, Աստրալիա, Լիբանան, Հարաւային Ամերիկա, Արեւմտեան ԱՄ Նահանգներ, Արցախ եւ Լոնտոն:

Թենիս.- Պաղտատ, Աստրալիա, Լիբանան, Հարաւային Ամերիկա, Արեւմտեան ԱՄ Նահանգներ:

Փինկ-փոնկ.- ՀՄԸՄ-Ֆրանս, Պաղտատ, Սթոքհոլմ, Գանատա, Լիբանան, Հարաւային Ամերիկա,

Արեւմտեան ԱՄՆ, Արցախ, Թիֆլիս: Լոն.- Աստրալիա, Հարաւային Ամերիկա, Լոնտոն:

Ճատրակ.- Պաղտատ, Միւնիխ, Գանատա, Լիբանան, Հարաւային Ամերիկա, Արեւմտեան ԱՄՆ, Թիֆլիս, Լոնտոն, Սուրիա:

Կուժ.- Արեւմտեան ԱՄ Նահանգներ, Գանատա, Հարաւային Ամերիկա, Մարսել:

ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ս. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցին կարիքը ունի հետեւեալ պաշտօններուն.

- Տնտես մայրիկի (շաբաթական դրութեամբ),
- Պահակի (ցերեկային):

Հետաքրքրուողները կրնան դիմել Եկեղեցւոյ քարտուղարութեան հեռաձայնելով հետեւեալ թիւին 2124268:

Ս. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւն

ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանը կարիքը ունի գիտական նիւթերու եւ լեզուներու դասաւանդման համար վկայեալ ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Փափաքողները կրնան դիմել Ճեմարանի տնօրէնութեան, հեռաձայնելով հետեւեալ թիւերուն. 4643363-53 / 0967560111

Տնօրէնութիւն Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Քաղքէճեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅՅԵԱԼ

ԱԻԵՏԻՍ ՔԱՀՔԷՃԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 10 Յուլիս 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:



ԱՊԱԳԱՅԱՏԵՍԻԼ ՍՓԻՒՈՔԸ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՎ

Փրոֆ. Արա Սայեդ

Սոյն տարուան Յունիսի երկրորդ կիսուն, Երեւանի մէջ լոյս տեսաւ գաղափարական, մասնագիտական թէ՛ յարանուանական իրենց պատկանելիութիւններէն անկախ, հոյլ մը աշխարհով մէկ ցիրուցան, բայց անխտիր բոլորը Նոյն ցաւոտ մտահոգութեամբ, հարուստ ազգային թէ՛ համայնքային կենսափորձով, մասնագիտական հրմտութեամբ, բեղուն փորձառութեամբ սփիւռքահայ, գիտական կառոյցներու եւ այլազան բնագաւառներու մէջ ազդեցիկ դերակատարութիւն ունեցող քսան մտաւորականներու կողմէ առաջարկուած լրջամիտ ծրագիրներու հատընտիր մը՝ «ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԸՆԿԱՅՈՒՄԻՆ ԴԵՎԻ ԱՎԱԳԱՅԱՏԵՍԻԼ ՍՓԻՒՈՔ, ԻՆՅ ԲԱՐԵՎԻՈՒՅԵԼ ԵՒ ԻՆՅԱԿԷՍ ՎԵՐԱԿԱԳՄԱԿԵՐԱԿԵԼ» խորագրեալ հատորը, որ կը բաղկանայ 150 էջէ:

«2022-ը՝ Սփիւռքի Տարի» Արամ Ա վեհափառի Կաթողիկոսական կոնդակով հռչակագիրը յանձնառու եւ պարտաւորիչ համարելով՝ Յունուարի վերջին օրերուն գործնական ծրագրի մը մտայղացումն ու նախաձեռնութիւնը առաջ բերած էր՝ 2011-ին հիմնած եւ մինչեւ օրս շուրջօրեայ սփռուող www.radioayk.com անցանց ձայնասփիւռի կայանի հիմնադիր ու հաղորդավարուհի Շաքէ Մանկասարեանը: Գիրքին մեկենասն է Շաքէ եւ Մարք Կրոկըն ամուլը: Խմբագրական խորհուրդին մաս կը կազմեն՝ առակագիր Եզնիկ Բալայեան, գրողներ՝ Գեորգ Պետիկեան, Ռուբէն Յովակիմեան, գեղանկարիչ՝ Վիգէն Շառոյեան, իսկ հատորին խմբագրութիւնը ստանձնած են՝ փրոֆ. Արա Սայեդ եւ Շաքէ Մանկասարեան:

Հայկական Սփիւռքը իր գերյոգնած մարտահրաւերներով, համաշխարհայնացումի քաջքոտուքին դիմաց անհաստատ, օրէ օր որակի սով մը ապրող, ինքնամաշուկա իրավիճակէն, բեւեռացած խրամատներէն, ապագայի անորոշ հորիզոնէն դուրս բերելու համար զգաստացնող ահագանգի մը կը կարօտի, թմրութիւնը թօթափեցնող անյետաձգելի ուժգին սթափումի մը պահանջ ունի: Արամ Ա Կաթողիկոս այդ մարտակոչը խստաշունչ բարձրաձայնեց, վտանգները ահագանգեց եւ վերջապէս անկիւնադարձային հռչակագիրով մը ազդարարեց:


Ուստի անմիջական ելքեր փնտռելու գործնական ռազմավարութեան խիստ պահանջի դիմաց ենք: Լոզունգներէ, տրոնաբարդ տրամաբանութենէ շատ հեռու, բուժելու կամքով եւ կարողութեամբ, գիտական հմտութեամբ տոգորուած, փորձառու եւ արհեստավարժ լրջախոհութեամբ գործելու ու մասնագիտացած ուղղութիւններով ընկալելու անյետաձգելի հրամայականին դէմ յանդիման ենք ազգովին:

Վերջին տասնամեակներուն տեղի ունեցած բոլոր շնորհակալ նախաձեռնութիւնները, զանազան համայնքային հանդիպումները, գաղութային խորհրդակցութիւնները, քննարկումները, խորհրդաժողովները, համագումարները, լսարանները եւ այլն, մնացին անպարտադիր եւ անկախ, տեսական եւ անկաշկանդ պարունակի կամ մակարդակի վրայ: Նոյնիսկ մարտահրաւերները, վերլուծումները եւ ահագանգող ակնկոծումները կարծես անհետացան, զգուշացնող տագնապները շոգիացան՝ մնալով միայն մամուլի էջերուն վրայ իբրէւ յիշատակելի եւ չգործադրուած իրադարձութիւններ, անցուդարձեր:

Ուստի գործնական ծրագիրներ մէջտեղ բերելու համար, խիզախութիւն մը պէտք էր, միայն գործը նախաձեռնելու եւ մասնակցելու զօ-

րեղ կամք ու իրագործելու հաստատակամ հաւատքի պէտք ունէր: Այս հատորը այդ հաւատքի եւ գործելու ձեւաչափի վառ ապացոյցն է, հաւաքական աշխատանքի դրսեւորումին գործնական մէկ նմուշը: Մէկ խօսքով այս հատորին մէջ տեղ գտած են այլընտրանքային լուծումներ, ելքեր ու գործադրելի առաջարկներ, որոնք անհասցէ չմնացին:

Նման ծրագիրներու հատոր մը միասնական խտացուած ճիգերու արգասիքն է, փաստացի հաստատում մըն է, թէ հայկական զուգահեռ համահայկականը նախաձեռնելու, ծրագրելու եւ գործադրելու կամք, կարելիութիւններ եւ գործիքաւորում կարելի է որոնել:



Բազմանշանակ եւ օրինակելի է նման անձնական նախաձեռնութեամբ ծնունդ առած եւ հաւաքական աշխատանքով աւարտած գործնական ծրագիրներու հատոր մը: Աշխատանք մը, որ պէտք է ըլլար հայկական Սփիւռքի աւանդական կառոյցներու, զանազան ղեկավար միաւորներու գործնական առաքելութիւնը, հեռատես ռազմավարութեան առաջնահերթութիւնը, գերագոյն նպատակը՝ մեր ներուժը համախմբելու, կամըրջելու, շարկակալելու, ծրագրաւորելու, մասնագիտական հարթակներ ստեղծելու եւ միասնական համագործակցութիւնը ամրապնդելու, հայ մտաւորականներու փաղանքները համախմբելու գերանհրաժեշտ օրակարգերու հիմնական ծրագիրներու շուրջ՝ որոնք կը կոչուին Սփիւռքի գոյառումի գերխնդիրներ:

Գործնական ծրագիրներ առաջարկելու, մշակելու նախաձեռնութեան մը մասնակցիլը պիտի նշանակէր, որ Սփիւռքի մէջ թէեւ քիչ, բայց կան տակաւին գործնական, լաւատեսութեան լուսաշիթերու հաւատացող հոյլ մը, որ կը տառապի զօթելու հայ մտաւորականները, կը տագնապի անոնց միջեւ ամրապնդելու շինիչ կապն ու կամուրջը, կը միտի միասնականութեան հարթակներ ստեղծել, անդրդուելի կամք ունի Նոյն թիրախին ծառայելու, զօրակցութեան ձեռք երկարելով սփիւռքահայ միաւորները դրդելու, շահագրգռելու, միտք-մտքի կցելով մտախոհելու, միասնա-

կանութեան միախորհուրդ հոգին գործնականացնելու, բարձրահունչ մարտակոչերը լսելի դարձնելու, ահագանգային աղաղակ մը հնչեցնելու գերագոյն նպատակին՝ թէ՛ հայկական եւ թէ՛ համասփիւռքեան մեր կեանքին մէջ:

Հատորին մէջ յիշուած գործնական ծրագիրները կարելի է համարել համեստ ձեւաչափով լուսամուտեր, անոնց ընդմէջէն արտասփռող միտքերը ճաճանչող շողերու նման կարող են Սփիւռքի հայապահպանութեան, հայակրթութեան, ազգային ունեցուածքներու կառավարումի, հայահաւաքի, բազմաշերտ վերակառուցումի, գիտական կեդրոններու, տեղեկագիտական, թուային եւ օժանդակ արհեստագիտութիւններու, ինքնութեան եւ այլ բաղադրիչ բնագաւառներու վրայ լոյս սփռել, մատչելի դարձնել:

Գիրքի կազմին վերջին էջին գետեղուած ծրագիրներու հիմնական միտքերը կը պարզաբանեն հատորին մէջ տեղ գտած ծրագիրներու բանալի ուղղուածութիւնները, կը փոխանցեն լուծումներու յստակ մտապատկեր մը, կենսագործելի մտադաշտեր կը թելադրեն, բարեյուշութիւններու կը մղեն:

Համոզիչ եւ արդար է, որ մեր ազգային տեսական բարձրագոյն լոզունգները, որոնք ընդհանրապէս ժամանակի հոսանքին հետ խափուսիկ կը դառնան եթէ չգործնականացնենք զանոնք, լալկան եւ տրոնաբարդ տրամաբանութեամբ ճապար ազգայնական եւ իրապարակային աղմկարար ճառերու կը վերածուին, մէկ խօսքով ապաշնորհ քարոզչութիւններ են ընդհանրապէս խօսողներ կը մնան, մակերեսային տեսաբանութեամբ եւ մանաւանդ զգացական մօտեցումով համակուած են, Եթէ չգործնականացնենք այդ բոլորը իմաստալից ծրագիրներով:

Ապացոյց է նաեւ, որ Նոր հայ սերունդի խորտակիչ մասը անդրդուելի է, խուլ կը ձեւանայ այդ բոլորին դիմաց, որուն հետեւանքով ալ այդ բոլոր մարտահրաւերները մնացած են միայն տեսական եւ հատուածական պարունակին մէջ: Ուստի գործնական նորարար ռազմավարութեամբ պէտք է գրուցել, համոզել մեր մտասերտումին կիզակետը հանդիսացող Նոր սերունդը: Խիստ կարիքը ունինք ժամանակակից գիտական, արհեստավարժ եւ հմուտ ճարտարապետումի՝ Սփիւռքի մարտահրաւերները տարրալուծելու, ելքեր գտնելու: Ծիշող այդ մէկն է այս հատորին թիրախը եւ ուրեմն անոր մէջ տեղ գտած գործնական ծրագիրներուն ճշգրիտ հասցեն:

Աւելորդ չէ նշել, որ ներկայ հատորին մէջ ներկայացուած ծրագիրները վերջակէտ մը չեն սփիւռքահայ մարտահրաւերներուն ելքեր որոնելու ճիգերուն ընդառաջ, հաւանաբար ամբողջական ալ չեն, սակայն իրապաշտ ըլլալու համար կրնան համոզիչ խթան հանդիսանալ, մտածելու թելադրիչ նշանակող ըլլալ Նոր ծրագիրներու շահեկան հորիզոններ յորդուելու: Կենսական է շեշտել, որ ներկայացուած մտորումներու, վերլուծումներու, ծրագիրներու աշխատակարգը կարելի է իր բնոյթով եզակի համարել, իսկ իր իմաստով՝ նախաձեռնութիւններու եւ հետագայ կարելի գործնական քայլեր իրականացնելու երթի սկզբնական ՌԻՆԵՑՈՅՑ մը:

Հաւաքական այս նախաձեռնութիւնը վառ օրինակն է, որ տակաւին Սփիւռքի մէջ ունինք գործնական ծրագիրներու հաւատացող ու աշխատանք չզլացող ապագայատեսիլ մտաւորականութիւն մը: Կը հաւատանք նաեւ, որ «Սփիւռքի Տարուան» հռչակագիրը յարմարագոյն գործի կոչնակն է, տալու պահը: Եւ հայը գիտէ, որ ազգաշէն գիտակցութեամբ տալը, նուիրաբերելը զրկանք չէ: Տալը հրճուանք է, երբ թիրախը հայ ազգի ընդհանրական եւ ապագայատեսիլ շահն է:

ԽԵՂՃԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ



Նայիրի Ասուրեան-Ֆրանքեան

Պատահա՞ծ է որ հանդիպած էք մարդոց, որոնք արտաքինով հին, ցընցոտիներ հագած են եւ շնորհքով արտայայտուելու, խօսելու կարողութիւն իսկ չեն ունեցած, ու դուք ինքնաբերաբար գիրենք խեղճ ու կրակ մարդիկ համարած էք:

Մի՛ աճապարեք որակումներ տալու մարդոց, փոխարէնը պահ մը մտաբերեցէ՛ք այլ բնոյթի խեղճերու ցանկ մը, որուն մէջ հաւանաբար գտնուիք եւ ու դուք:

Այսպէս՝ սխալ անձերու գաղտնիք վըստահողներ: Ըմահաճին գոհացնել շանացողներ: Մարդ սիրաշահելու համար սկզբունքները հրաժարուողներ: Պարզամտութեան հետեւանքով վստա կողմեր: Կեանքի մէջ ի գուր վագ վագ ըլլալին եզրակացողներ: Անշահախնդրօրէն ծառայելէ ետք ապերախտներու հանդիպողներ: Գործիչ, կղերական, ուսուցիչ, պաշտօնեայ եւ այլք, միայն յետ մահու գովաբանողներ կամ պարգեւատրողներ: Մեր ընտանիքներէն դուրս սեր եւ ուրախութիւն փնտռողներ: Սանձարձակ գաւակներու ամօթալի արարքները վայելող ծնողներ: Նոյն տան մէջ օտարականներու պէս ապրողներ: Դառն իրականութիւնները ուրանալով ինքնախաբէութեան մէջ ապրողներ ու հարցերը փակուած համարողներ: Ժամանակորդ չունենալով մէկտեղ դրամ դիզողներ եւ ապա թալանուողներ: Խոստացուած ժամանակէն բաժին ստանալու հեռանկարով հոգատարներու արժանացողներ: Լաւագոյն բժիշկներէն իսկ ճիշդ փնտրողում չստացողներ: Մեզի դէմ թշնամանք կամ լարուածութիւն ունեցող անձերը անտեղի արդարացնել փորձողներ: Ծռայլութեամբ ծախսելով մենք մեզ առատածէն սեպողներ: Պարզապէս կիւրաքանկ հարստութեան հետեւանքով բարեկամներու առատութիւնը վայելողներ: Համբաւաւոր անձերու հետ բարեկամութիւն ընելով եւ անոնց հետ նկարուելով մենք մեզ լիարժէք համարողներ: Դամոկլեան թուրի տակ նստողներ: Պաշտօնէն կամ աթոռէն հրաժարելուս պէս յարգանք եւ բարեկամ կորսնցողներ: Որպէս ունկնդիր անհասկնալի, բարդ պատգամներու աւարտին կեղծաւորութեամբ պատգամաբերը գնահատողներ եւ ի վերջոյ ամենախղճալիներն ... որպէս հաւատացեալներ՝ Բրիստոսի միա՛յն այս կեանքին համար յուսացողներ:



«Եթէ միայն այս կեանքին համար Բրիստոսին յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէ ԱՒԵԼԻ խղճալի ենք»: (Ա. Կորնթ. 15: 19)

ՀՀ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Նամբերը եւ ենթագիւտները, այդ կարգին՝ հակահրասայլային եւ հակահետեւակային ականներ, իրենտանային արկերու եւ օդային ռումբի մնացորդներ, ուղղորդուած ականներ եւ ինքնաշէն պայթուցիկ առարկաներ:

Բժշկական խումբը բուժօգնութիւն ցուցաբերած է աւելի քան 45 հազար տեղաբնակներու:

Արդարեւ, 3 Յուլիս 2022-ին, Հայաստանի մէջ տեղի ունեցաւ Մարդասիրական Առաքելութեան կողմէ ականազերծուած տարածքներու յանձնումը Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Հայկական Նահանգի իշխանութեան:

Խան Թուման բնակավայրի մօտ 137.000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ականազերծուած տարածքը յանձնուեցաւ Հայկական իշխանութիւններուն՝ առ ի շահագործում: Ըստ Մարդասիրական

Ականազերծման Կեդրոնի տուեալներուն, ականազերծման աշխատանքներուն ընթացքին յայտնաբերուած եւ վնասազերծուած են 74 զինամթերք եւ ենթագիւտներ:

Յանձնումի արարողութեան ընթացքին ստորագրուեցան յանձնումի-ստանձնումի վկայականները եւ Հայկական իշխանութեան յանձնուեցան ականազերծուած տարածքներու քարտեզները:

Արարողութեան ներկայ էին Հայկական փոխնահանգապետ Զումեյթ շէյխ Ասին, Հայկական տեղակալուած հակամարտող կողմերու հաշտեցման ռուսական կեդրոնի ղեկավարութիւնը, ՀՀ Հայկական իրաւաստուր, Հայկական Նահանգի իշխանութեան ներկայացուցիչներ եւ այլ պաշտօնատար անձինք:

Ողջունելով հիւրերը՝ մարդասիրական առաքելութեան ընդհանուր խումբի պատասխանատու Արկաւտի Տոնոյեան համառօտ կերպով ներկայացուց կատարուած աշխատանքները եւ հաստատեց անոնց շարունակականութիւնը:

ԶԱՐԹԻՐ,...

Սկիզբ՝ էջ 6

Եւ մեր լեզուն վայելէր տարրական պաշտպանութիւն մը, ապա մեր մէջ ալ գրաբարեան **գարթնուլ**-ը վերածուած պիտի ըլլար պարզ կանոնաւոր **գարթնիլ**-ի կամ թերեւս **գարթնել**-ի, որոնք պիտի տային հետեւեալ երկուքէն մէկը՝

- կը գարթնիմ- կը գարթնեի- գարթնեցայ- գարթնի՞ր
- կը գարթնես- կը գարթնեսի- գարթնեցայ- գարթնե՞

Այսպէս ալ ան պիտի մտնէր մեր դպրոցական ընթերցարաններուն, բառարաններուն եւ քերականութիւններուն մէջ եւ կիրարկուէր այն նոյն դիւրութեամբ, որ այսօր կը խոնարհենք **արթննալ**-ը՝ իբրեւ հոմանիշ կամ նոյնանիշ այս վերջինին:

Ըստ այնմ մեր ընթերցարաններն ու աշակերտները տարբեր ճոխութեամբ պիտի ճշտուէին իրենց մայրենի բարբառը, իսկ բառարաններն ալ պիտի դադրէին անշունչ ու անգործածելի բառերու գերեզմանոց ըլլալէ:

ԿՐԹԱՍԻՐԱՅ...

Սկիզբ՝ էջ 12

- Տեսուչ եւ արաբերէն լեզուի ուսուցիչ Յովիկ Օհանեան, առ ի գնահատանք Հայկական Կրթական Տնօրէնութեան «Արուեստը Մեզ Կը Միացնէ» նախաձեռնութեան մասնակցութեան համար իր բերած ներդրումին:

- Ֆրանսերէնի ուսուցչուհի դոկտ. Նուր Մուսալի-Պասմաճի, իր վաստակին եւ մասնագիտական աչալուրջ դասաւանդութեան համար:

- Նախակրթարանի արաբերէնի վաստակաշատ ուսուցչուհի Թալին Զեքիճեան-Հայտար, իր վաստակին եւ բժախնդիր աշխատանքին համար:

Պարգեւատրումներուն յաջորդեց Կրթասիրաց Սարգիս Զեմպերճեան Երկրորդական վարժարանի տնօրէն երկր. Անդրանիկ Պողոսեանին խօսքը: Ան ըսաւ. «Կրթասիրացը իր հիմնադրութեան օրէն, որպէս հայկերտումի եւ մարդկերտումի օճախ, 98 տարի շարունակ բաց պահեց իր դռները հայ աշակերտներուն դիմաց, հակառակ բազմատեսակ դժուարութիւններուն»: Ան հաստատեց, որ Հայկական մայր գա-

ղութիւնը կը շարունակէ մնալ մարդակերտումի այն դարբնոցը, որ մարդու լը հայթայթէ համայն հայութեան: Խօսքի աւարտին, ան շնորհակալական խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազան Զօր, Կրթասիրաց Մշկթ. Միութեան Խնամակալութեան, վարժարանի Հոգաբարձութեան, Ծնողաց Յանձնախումբին եւ վարժարանի հոգատար բոլոր մարմիններուն:

Խումբ մը շրջանաւարտներ, իրենց դասընկերներուն կողմէ հրաժեշտի խօսք արտասանեցին, ապա Տեր Խորէն Զինյ. Պերթիզեանի ձեռամբ վկայականաց բաշխում տեղի ունեցաւ:

Զահանայ հայրը իր սրտի խօսքը ուղղելով յայտնեց, որ շրջանաւարտները մեր ապագան կը ներկայացնեն, ընկերութեան սիրտը կը կազմեն եւ իրենցմով կեանքը կը շարունակուի: Ապա Առաջնորդ Սրբազան Զօր բարեմաղթութիւնները փոխանցեց շրջանաւարտներուն եւ վարժարանի տնօրէնութեան: Հանդէսը իր լրումին հասաւ. «Պահպանիչ» աղօթքով:

Հանդէսէն ետք, վարժարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ աշակերտական խրախուսանք եւ կարկանդակի հատում:

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Անկարեւոր բաները ձեր ուշադրութիւնը պիտի շեղեն: Չգոյշ եղէ՞ք եւ մի՛ մոռնաք ձեր սիրելիները:

ՏՈՒԼ



Մտահոգ էք թե՛ անձնական եւ թե՛ տնտեսական դժուարութիւններու բերումով: Ձեր յոյսը մի՛ կտրէք, որովհետեւ մուշ փապուղիին ծայրը միշտ ալ լոյս կը նշմարուի:

ԵՐԿՈՐՈՐԵԱԿ



Անկանխատեսելի էք եւ այդ իսկ պատճառով ալ՝ սիրուած: Մի՛ թերագնահատէք ուրիշները, անոնք եւս կրնան գարմացնել ձեզ:

ԽԵՑՁԵՏԻՆ



Ընկերներու հետ միատեղ իրաքանչիւր գործ հաճոյք կը պատճառէ ձեզի: Դուք իրար հետ այնքան համերաշխ էք, որ բոլորը ձեզ կը նախանձին:

ԱՌԻՇ



Հանգիստ առէ՞ք ամօրեայ հոգերէն եւ հեռու մնացէ՞ք ընկերային ցանցերէն: Արձակուրդի մեկնեցէ՞ք:

ԿՈՅՍ



Ձեր հին վեճերը վերջապէս պիտի հարթուին: Բաց եղէ՞ք համագործակցելու բոլորին հետ:

ԿԵՒՈՔ



Երեխաներու հետ շատ լաւ կը համագործակցիք: Եթէ աշխատանք ընտրելու երկմտանքի մէջ էք՝ անպայման մանուկներու հետ աշխատանքը ընտրեցէ՞ք:

ԿԱՐԻՃ



Ինքնավստահութեան պակասը ձեզի պիտի մղէ սխալներու: Նոյնիսկ ձեր շրջապատը պիտի կասկածի ձեր կարողութիւններուն:

ԱՂԵՂԱՊՈՐ



Փորձեցէ՞ք դանդաղ եւ փոքր քայլերով հասնիլ ձեր նպատակին: Միշտ չէ, որ մեծ քայլեր առնելը արդիւնատու է:

ԱՅԾԵՂՁԻՐ



Ձեր յամառութիւնը մէկ կողմ դրէ՞ք, փորձեցէ՞ք ձեր շրջապատին հետ ընդհանուր յայտարարի գալ եւ հարցերը անուշութեամբ լուծել:

ՋՐՀՈՍ



Մի՛ հրաժարիք ձեր երազանքներէն, իրատես եղէ՞ք եւ ձեր երազանքները նպատակներու վերածելով փորձեցէ՞ք հասնիլ անոնց:

ՋՈՒԿ



Հոգեբանական ճնշում մի՛ բանեցնէք ուրիշներուն վրայ: Եթէ որեւէ անձ ձեր կարծիքին համամիտ չէ, փորձեցէ՞ք պատճառը հասկնալ եւ ոչ թէ ձեր կարծիքը պարտադրել:



Նուշիկ Սողոյեան-Առաքելեան

ՁՄԵՐՈՒԿԻՆ ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ձմերուկը ոչ միայն համեղ, այլեւ օգտակար պտուղ մըն է: Ան գրեթէ (90 տոկոսով) ջուրէ բաղկացած է: Այս պատճառով ալ մեր ծարաւը կը յագեցնէ: Անիկա կը պարունակէ մեծ քանակով ածխաջուրեր: Հարուստ է A, B եւ C կենսանիւթերով եւ հանքային նիւթերով, ինչպէս՝ մակնիզիումը, որ օգտակար է ոսկորներու ամրութեան:

Ձմերուկին կուտերն ալ նոյնքան սննդարար են, որովհետեւ անոնք կը պարունակեն ֆոսֆոր, մակնիզիում եւ կենսանիւթեր: Նախընտրելի է կուտերը ուտել չորցուած կամ խարկուած ձեւով:

Ձմերուկի հիւթը մեր ցաւերը կը մեղմացնէ, իսկ կեղեւը ունի օգտակար յատկութիւններ: Թարմ ձմերուկի կեղեւը լաւ միջոց է գլխացաւերուն դէմ: Չորցուած կեղեւէն ալ կարելի է պատրաստել տարբեր հեղուկներ, որոնք կրնան բուժել միզային բորբոքումները:

Ձմերուկը կ'արգիլէ առողջութեան դէմ կործանարար գործընթացը: Անիկա դրական ազդեցութիւն ունի նաեւ սիրտի մկանին վրայ, որովհետեւ կը լայնցնէ արիւնատար երակները:

Ֆիզիքական ծանրաբեռնութեան ետք ան կը նպաստէ մեր գործարաններուն վերականգնումին, որ օգտակար է մարզիկներուն: Անիկա մեր առողջութիւնը ամրապնդող բնական միջոցներէն մէկն է:

Ձմերուկի վնասակար յատկութիւններէն մէկը այն է, որ եթէ սպառենք գայն անսահմանափակ չափով մեր երիկամները կը ծանրաբեռնուին: Շաքարի մեծ քանակը դուրս բերելու համար մեր գործարանները բաւական ջուր կը սպառեն: Այդ պարագային ջուրին հետ դուրս կու գան մեծ թիւով հանքանիւթեր, քան՝ թունաւոր նիւթեր:

Բժիշկները չեն թելադրեր ձմերուկ ուտել երիկամային հարցեր ունեցող հիւանդներուն, ենթաստամոքսային գեղձի բորբոքում եւ շագանակագեղձի խնդիրներ ունեցող մարդոց:



ՁՄԵՐՈՒԿԻ ՕՇԱՐԱԿ

Բաղադրութիւն

- 4 գաւաթ ձմերուկի հիւթ
- 3 գաւաթ սառոյց
- 4 ճաշի դգալ կիտրոնի հիւթ
- Շաքար՝ ըստ ճաշակի

Պատրաստութիւն

Ձմերուկը, սառոյցը, շաքարն ու կիտրոնի հիւթը միասնաբար հարել այնքան մինչեւ որ ունենանք թանձր հիւթ մը: Պարպել գայն գեղեցիկ ոտքով գաւաթի մը մէջ եւ զարդարել որեւէ կանաչ պտուղով կամ անանուխի տերեւով:

Բարի ախորժակ



ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՌԱՏՆԵՐ

- Բախտ կայ փորձանք կը բերէ, փորձանք կայ՝ բախտ կը բերէ:
- Բանուկ ձեռքը չի մուրար:
- Բարիքները վայելած ատեն, բարերարը մի՛ մոռնար:
- Բաղնիք մտնողը կը քրտնի:
- Բերնէ բերան՝ կ'ըլլայ գերան:
- Բարկացկոտը սուր կը նայի, կասկածոտը՝ ծուռ:
- Բարձր ձայնը եթէ բանի ծառայեր, էջը պալատներու տեր կը դառնար:
- Բանալիիդ տեր եղի՛ր, դրացիդ գող մի՛ հաներ:
- Բեռը՝ շալկողին կռնակը կը դնեն:





Ռաֆֆի Սիկատեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Համաշխարհային պասքեթի գոման մրցումներու շրջագիծին մէջ, Սուրիոյ տղոց հաւաքականը Հալէպի մէջ 76 - 67 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրելով գիշեցաւ Պահրէյնի կազմին: Հանդիպումի ավարտին դաշտին մէջ գտնուող ժողովուրդը իր դժգոհութիւնը յայտնեց եւ պահանջեց պասքեթի դաշնութեան հրաժարականը:



- Ալճերիոյ մէջ տեղի ունեցած միջերկրական ծովու երկիրներու մրցումներուն սուրիացի բռնցքամարտիկ Ահմատ Ղսուն տիրացաւ ոսկի մետալի, ձիարշաւի մրցումին Ահմատ Համշո եւս ձեռք ձգեց ոսկի մետալ: Սուրիոյ երրորդ ոսկի մետալը տրամադրուեցաւ Այա Ռահիէին՝ 400 մետր վազքին առաջնութիւն արձանագրելուն առիթով:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԵՆՐԻԿ ՄԵՍԻՅԱՐԵԱՆ ԴԱՐՁԱՎ ԻՆՅԸՐԻ ԽԱՂԱՑՈՂ

Ուրբաթ օր Իտալիոյ Ինթըր Միլանի ակումբը պաշտօնապէս ներկայացուց խումբին մաս կազմող Հայաստանի հաւաքականի խմբապետ Հենրիկ Միխայրեանը: Ան դարձաւ Ինթըրին մաս կազմող առաջին հայը: Հենրիկի պատմութիւնը սկսաւ Երեւան, 1989 թուականին: Անոր հայրը՝ Համլետը եղած է արհեստավարժ ֆուտպոլիստ:



Հենրիկ մաս կազմած է Ուլքրանիոյ Շախտար խումբին, ուր եղած է արհեստավարժ մարզումի իր առաջին տեղը, որմէ ետք տեղափոխուած է Գերմանիա, մաս կազմելով Պորիսիա Տորթմունտին,

որուն հետ արձանագրած է փայլուն արդիւնքներ: Փրեմիեր լիգ տեղափոխուելով դարձած է Մանչեսթըր Ինսայթըրի եւ Արսէնալի խաղացող, ապա անցնելով Իտալիա մաս կազմած է Ռոմա խումբին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՍԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՔԱԿԱՆԸ՝ ԵՐՈՊԱՅԻ ՓՈՐԸ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱՆՈՅՆԱՆ

Հայաստանի պասքեթի տղոց հաւաքականը Մալթայի մէջ տեղի ունեցած մրցաշարքը յաղթական ավարտելով տիրացաւ Եւրոպայի փոքր երկիրներու ախոյեանութեան: Եզրափակիչ խաղին հայ մարզիկները 84 - 68 արդիւնքով յաղթեցին հիւրընկալ Մալթայի կազմին: Հանդիպման ամենաարդիւնաւետ խաղացող ճանչցուեցաւ Հայաստանի հաւաքականի խաղացող Քրիս Ճոնսը, որ անհատաբար կրցաւ նշանակել 41 կետ: Մրցանակային 3-րդ տեղը գրաւեց Անտորայի հաւաքականը, որ յաջողեցաւ պարտութեան մատնել Ատրալէնանը՝ 84 - 75 արդիւնքով:



ՀԱՅԿ ԱՔՐԱՀԱՍՏԵԱՆ՝ ԸՄՔԵԱՄԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ՊՐՈՆՁԵ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Հայաստանի ազատ ոճի ըմբիշ Հայկ Աբրահամեան Հռոմի Եւրոպայի ըմբշամարտի մրցաշարքին տիրացաւ պրոնզ մետալի: 61 քկ. ծանրութեան ըմբիշը 3-րդ տեղի համար մրցամարտին 8 - 3 արդիւնքով պարտութեան մատնեց ռումանացի Դանիել Սանդուն: Այդպիսով, Հայկ Աբրահամեան չորրորդ մետալը ապահովեց Հայաստանի հաւաքականին: Յիշեցնենք, որ հաւաքականին մաս կազմող ըմբիշները նաեւ նուաճեցին 2 ոսկի, 1 արծաթ մետալներ:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 397)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Արամ Հայկազի երկերէն (երկու բառ):
- Քարուքանդ: Տարի: Տառի մը անունը:
- Որոշուած գին: Ստեղծագործ:
- Միջազգային կազմակերպութիւն մը: Յուցական դերանուն:
- Հողածուխ: Գոյութիւն ունին:
- 260: Նենգութիւն: Ժխտական պատասխան:
- Ցաւի ճիչ: Ծնօտ: Տարածքի միաւոր:
- Տարուան եղանակներէն: Վահան Փափագեանի ծածկանունը:
- Ներքեւ: Հակառակ՝ լեզուով մը այո՛: Հակառակ՝ քէն: Ձայնանիշ:
- Աղբիւր: Ծրար, կապոց: Յոգնակերտ մասնիկ:
- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Մեծագոյն մեղքը գործած կ'ըլլան երիտասարդները, եթէ միշտ վերէն նային հիներուն վրայ եւ արհամարհեն անոնց փորձառութեան վաստակը»:
- Հանքային համեմ: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Զիմքի տպաւորութիւն:

Ուղղահայեաց

- Սրտմտութիւն: Ակոյայ:
 - Առաջին կինը: Յամառ:
 - Ուղղութիւն ճշդորդ: Ոչ հասուն:
 - Առարկայ: Տառի մը անունը:
 - Չոհ, մարտիրոս: Ահաւոր:
 - Շատակեր շրային թռչուն: Երգ:
 - Աչք: Ծեփի գործածուող ճերմակ հանածոյ:
 - Մշտափոփոխ: Իրերայաջորդ տառեր:
 - Նոյնօրինակ: Ծուխ:
 - Ռագմական օդանաւի մակնիշ: Հակառակ՝ ցուցական դերանուն:
- Սարսափ:
- Հակառակ՝ կեռ, ճանկ: Հակառակ՝ անլուծելի:
 - Կիլիկիոյ քաղաքներէն: Լեռ:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 396)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ա	բ	գ
2	ն	կ	ղ	մ	յ	տ	ր	մ	ա	ա	ա	ա
3	հ	ա	ր	ա								
4	ա	ս	ր	ա	տ							
5	տ	զ	է	կ	մ	ա	թ	ի				
6	ն	ո	ա	ի	ա	ք	լ					
7	ո	ր	ա	կ	պ	կ	ա	ա	հ			
8	ւ	լ		ա	ա	ա	յ	ր	ր			
9	մ	ր	գ	ա	տ	ա	ն	ա	ա			
10	ն	յ	ո	ն	ի	մ	ա	տ				
11	ա	ա	մ	ո	ւ	ւ	ի	ր	ա			
12	է	մ	ք		պ	շ	ն	ո	ւ	ւ	պ	

ԼՈՒՐԻՆ

ԵՐԿՐԵՐԵՐԹ 11/7 22° 36°	ԵՐԵՐԵՐԵՐԹ 12/7 23° 39°	ՉՈՐԵՐԵՐԵՐԹ 13/7 22° 39°	ՀԻՆՑԵՐԵՐԹ 14/7 22° 38°	ՈՐԲԱՐԹ 15/7 21° 37°	ՇԱՐԱՐԹ 16/7 22° 38°	ԿԻՐԱԿԻ 17/7 21° 38°
--	--	---	--	---	---	---

ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ

Ազգ. Քարեն Եփփե ճեմարանի Շրջ. Միության Վարչության կազմակերպությամբ Շաբաթ 2 եւ Կիրակի 3 Յուլիս 2022-ին «Գ. Եսայան» սրահին ներս տեղի ունեցաւ

ղնելու եւ կաշկանդելու գիրքեր: Չոյգ ձեռնարկներուն ներկայ էին Ազգ. Վարչութիւնը, ճեմարանի տնօրէնն ու ուսուցչական կազմը, Շրջ. Միության Վարչութիւնը, ճե-



ճեմարանի 10-րդ եւ 11-րդ կարգերու աշակերտութեան պատրաստած գեղարուեստական երեկոն:

մարանի Խնամակալութիւնը, ՅՄԸՄ-ի Կ. Վարչութեան ներկայացուցիչը, կրթական հաստատու-



Ձեռնարկը սկսաւ բացման պատկերով մը, որուն յաջորդեցին երգեր, պարեր, զանաւանդ, երաժշտական կատարումներ:

թիւններու ներկայացուցիչներ, քահանայ հայրեր եւ ծնողներ:

Կարճ ժամանակաշրջանի մը մէջ ճեմարանականները յաջողած էին բեմ հանել իրենց ձիրքերը՝ բեմադրել զանաւանդ, սորվիլ երգ ու պար, նուագել դասական եւ ժողովրդային ստեղծագործութիւններ, ասմունքել, դերեր մարմնաւորել, թեմագրութիւն պատրաստել եւ հանդիսատեսին ներկայանալ անկեղծ ու գունեղ իրենց աշխարհով:

Ձեռնարկներու աւարտին, ճեմարանի տնօրէն Յակոբ Քիլեճեան շնորհակալութիւն յայտնեց Շրջ. Միության եւ ձեռնարկի յաջողութեան սատար կանգնած շրջանաւարտներուն:



Այս ձեռնարկը մեծ ժողովրդականութիւն կը վայելէ հանդիսատեսին, յատկապէս ճեմարանի աշակերտներուն եւ շրջանաւարտներուն կողմէ, քանի որ աշակերտներուն աշխատանքին արդիւնքն է: Այստեղ ի յայտ կու գան անոնց բազմապիսի ձիրքերը, բեմին վրայ խանդավառ մթնոլորտ կը տիրէ, իսկ հանդիսատեսը հետաքրքրութեամբ կը հետեւի:

Ապա խորհրդանշական յուշանուէրով պարգեւատրուեցան Շրջ. Միության այն անդամները, որոնք իրենց ներդրումը բերին միութեան աշխատանքներուն, յատկապէս այս ձեռնարկին: Այսպէս. պարգեւատրուեցան՝ Ժիրայր Կարապետեան, Արա Մուրաֆեան, Սագօ Պալապանեան, Էլէնա Աւագեան, Նանար Շահինեան, Լենա Չոքկարեան, Անժելա Չաղլասեան, Մարինէ Մարգարեան, Սարին Շահինեան եւ Նանոր Մարտիկեան:

Յետաքրքրականը այն է, որ երեկոն իր բոլոր մանրամասնութիւններով՝ բեմայարդարում, տարազներ, յայտագիր, արտասանուած խօսքեր եւ այլն, բծախնդրութեամբ կը պատրաստուի, որովհետեւ աշակերտները իրենց լաւագոյնը կ'ուզեն ներկայացնել, իսկ Շրջ. Միության Վարչութիւնը ազատութիւն կու տայ անոնց մտքի թռիչքին, առանց սահմաններ

Ձեռնարկներու աւարտին Տէր Չարեհ Քիւնյ. Շաքարեան եւ Տէր Խորեն Քիւնյ. Պերթիզեան Սրբազան Զօր բարեմաղթութիւնները փոխանցեցին, ապա «Պահպանիչ» աղօթքով փակեցին գոյգ ելոյթները:

ԿՐԹԱՍԻՐԱՅ Ս. ՉԵՄՊԵՐՃԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՎԿԱՅՈՒԵՅԱՆ 2021-2022 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԽՐՏՆԵՐԸ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ «ՆՈՒՊԱՐ ՅԱԿՈՒԵԱՆ» ՆՈՒՆՉԸ

Կրթասիրաց կրթօճախէն ներս ծլարձակելու, հասակ առնելու եւ Միջնակարգէն շրջանաւարտ դառնալու հպարտանքով, յուզումնախառն զգացումներով կը նկարագրեմ մեր աւարտական հանդէսը: Որքա՛ն երախտապարտ ենք մեր սիրելի վարժարանին, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, իրենց ընծայած ծառայութիւններուն եւ անսակարկ խնամքին համար: Անոնք ո՛չ միայն ուսման ճանա-

եամբ Մարինա Նալպանտի, «Կենաց Երգ»ը՝ ժողէֆ ճէլանեանի, «Նարե» երգին երաժշտութիւնը Նուագեցին՝ Սալեմ Նաասանէ (ջութակ), Ֆահմի Քոզապիլը (կիթառ), տեսուչ Յովիկ Օհանեան (դաշնամուր): Արփի Գրտանեան (դաշնամուր) նուագեց Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւնը, որուն ընթացքին շրջանաւարտները ներդաշնակ պար մը ներկայացուցին, պարուսոյց Նայիրի Օհանեան-Մար-



պարիը հարթեցին մեր առջեւ, այլեւ՝ մեր ձիրքերը մշակեցին:

գարեանի եւ օգնական պարուսոյց Ալիսիա Լախոյեանի գեղարուեստական ղեկավարութեամբ:

Յովանաւորութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ գերջ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Շաբաթ, 2 Յուլիս 2022-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Կրթասիրաց Մշկթ. Միութեան «2. Գաբրիէեան» սրահին ներս տեղի ունեցաւ Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրդ. վարժարանի 2021-2022 տարեշրջանի միջնակարգի եւ երկրորդականի վկայականաց բաշխման հանդէսը, որուն ներկայ գտնուեցան վարժարանի հոգեւոր հովիւ Արժ. Տէր Խորեն քիւնյ. Պերթիզեան, Յալեպի Կրթական Տնօրէնութեան Պարտադիր Ուսման քննիչուհի տիկ. Մուսա Ալ-Իիտ, Կրթասիրաց Մշկթ. Միութեան Խնամակալութիւնը եւ անոր ատենապետ Տիար Կարայիս Պարտաքճեանը, վարժարանի Զոգաբարձութիւնը եւ անոր ատենապետ Տոքթ. Ռաֆֆի Չէյթեանը, տնօրէն երկրջ. Անդրանիկ Պողոսեանը, Ծնողաց Յանձնախումբը, շրջանաւարտներուն ծնողներն ու հրաւիրեալները: Այս տարի, 12-րդ կարգի հունձը կը զուգահեռ «Նուպար Յակոբեան» հունձը, անմահացնելու ուսուցիչ, ազգային գործիչ, ԱՄ Նահանգներու Կրթասիրաց Սանուց Միութեան հիմնադիր Նուպար Յակոբեանի անմար յիշատակը:

Բեմի յարդարանքը պատրաստուած էր տեսուչ Յովիկ Օհանեանի եւ Մարիա Եղիայեանի ջանքերով:

Գեղարուեստական յայտագիրէն ետք, վարժարանի տնօրէն, երկրջ. Անդրանիկ Պողոսեանն ու ընդհանուր տեսուչ Մարալ Դերձակեանը առաջին անգամ ըլլալով միջնակարգի եւ երկրորդականի աշակերտներուն յատկացուած «Անդրանիկ Սոնա Պողոսեան» ուսումնական մրցանակը ի գործ դնելով պարգեւատրեցին իւրաքանչիւր կարգի հայերէն լեզուի առաջին երեք բարձրագոյն նիշերը ապահովող եւ ընդհանուր նիւթերու բարձրագոյն նիշը ապահովող աշակերտները, նիւթական պարգեւով եւ գնահատագիրով: Ապա անոնք պարգեւատրեցին Նայիրոյ տարուան Թ. եւ ԺԲ. կարգերու պետական քննութեանց բարձրագոյն գնահատանիշ ապահովող վարժարանի աշակերտները:

9-րդ եւ 12-րդ կարգերու գեղարուեստական յայտագիրը ընդգրկեց հայերէն եւ արաբերէն բացման խօսքեր, ասմունք, երգ, նուագ եւ պար: 12-րդ կարգի աշակերտները ասմունքով յիշատակեցին Եղիշէ Չարենցի ծննդեան 125-րդ ամեակը, հայերէնաւանդ ուսուցչուհի Նորա Տանակեօզեան-Մանսուրեանի հսկողութեամբ: Հնչեց «Ասմար Ալ-Լաուն» երգը, մենակատարութեամբ:

Յատուկ յուշանուէրով եւ գնահատագիրով պարգեւատրուեցաւ վարժարանի պետական ընթացաւարտ տնօրէն Մուհամմետ Զաֆեզը, առ ի երախտագիտութիւն վարժարանին վերելքին ի խնդիր իր տարած աշխատանքին: Այնուհետեւ, տնօրէնին ձեռամբ, գնահատագիրով եւ ծաղկեփունջով պարգեւատրուեցան վարչական եւ ուսուցչական կազմերէն հետեւեալները.-

- Ընդհանուր տեսուչ Մարալ Դերձակեան, երկար տարիներու վաստակաշատ ծառայութեան համար:

Արփի Գրտանեան
Միջնակարգի շրջանաւարտ
Շաբ. 12 8